

Պարտիական կազմակերպություններ
ի աշխատանքի խոշոր թերություններ
ից մեկը, ինչպես նշվեց պլենումում,
այն է, որ առանձին դեպքերում նրանք
ճիշտ չեն որոշում իրենց առջև դրված
այն կոնկրետ խնդիրները, որոնք բը-
խում են պարտիայի ու կառավարու-
թյան որոշումներից: Այդպես վարվեց,
օրինակ, Երևանի Պետական համա-
լսարանի պարտիական կազմակերպու-
թյունը, որի աշխատանքը պլենումում
սուր քննադատության ենթարկվեց:
Հայտնի է, որ ՍՄԿՊ XX համագումարը
լուրջ և կարևոր խնդիրներ դրեց բարձ-
րորակ, լայն մտահորիզոնի ու բարձր
կուլտուրայի տեր, բազմակողմանի ո-
րեն զարգացած կադրերի պատրաստ-
ման ուղղությամբ: Թվում էր, թե հա-
մալսարանի պարտիական կոմիտեն
գործնական հետևություններ կաներ
համագումարի որոշումներից և պար-
տիական կազմակերպության ու ամ-
բողջ կոլեկտիվի ուշադրությունը կսը-
րեր այն պրակտիկ միջոցառումների
մշակման ու իրագործման վրա, ո-
րոնք ապահովեին համագումարի որո-
շումների կատարումը: Մինչդեռ այդ-
պես շատացվեց: ՍՄԿՊ XX համագու-
մարի արդյունքների քննարկմանը
նվիրված պարտիական ժողովում կո-
մունիստների մի մասը, աղմուկ բարձ-
րացնելով անհատի պաշտամունքի
քննադատության շուրջը, ժողովի ուշա-
դրությունը շեղեց այն խոշոր խնդիրնե-
րից, որոնք կանգնած են համալսարա-
նի կոլեկտիվի առջև: Համալսարանի
պարտիական կոմիտեն, շգտնվելով
քաղաքական անհրաժեշտ բարձրու-
թյան վրա, փաստորեն ճիշտ ուղիով
չտարավ ժողովը: